Ժ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Երգել եմ քեզ, հանախ երգել՝ որպես անուշ, որպես երազ,
Տենչանքների ծնունդ շքեղ, դու ոսկեթափ Եդեմ անհաս,
Անգո կայան երանության, ուր պիտի գա մի օր հոգիս
Խոնջանք փնտրել, ազատ շնչել ու վերջ գտնել խուլ մորմոքիս...

Այնքա՜ն, այնքա՜ն արտասվել եմ ես քեզ համար, քո ցավի հետ,
Երբ ապասեր մարդկանց գրկում զգացել եմ ես ինձ օտար,
Երբ գրկանքի քամին փչել ու տարել է ինձնից անհետ
Լույս հավատը քո զարքոնքի և իմ հույսը անմխիթար:

Կուրծք եմ տվել տառապանքի մրրիկներին աշխարհացրիվ
Ու կասկածի խավարի մեջ խարխափել եմ անօգնական,
Հանախ ընկել, կրկին կանգնել, հաղթել, պարտվել եմ անհաշիվ,
Քե՛զ եմ երգել, քե՛զ ողբացել, քե՛զ տենչացել, ի՜մ Հայաստան:

Ու երգում եմ, նորից երգում քե՛զ, Հայրենի՛ք իմ փառակերտ.
Դու ապրում ես, կաս երկնի տակ քո մեծ սրտով միլիոնատրոփ.
Մեր կապն այնքա՜ն է հարազատ, այնքա՜ն ամուր, այնքա՜ն է սերտ,
Որ ես ձուլվում եմ, տե՛ս, քեզ հետ ու չեմ լինի այլևս որբ:

Սիրում եմ քեզ անհուն սիրով, ո՜վ մարմնացած երազ շքեղ,
Եվ երգում եմ քո կյանքը նոր, ստեղծագործ նիզդ խաղաղ.
Էլեկտրավազ խոյանքն անհաս քո կերտումին երկնասլաց,
Քո հնավանդ մշակույթի վերափրրումն անհախրնթաց,

Մկանակուռ տղաներիդ աշխատանքի խանդն առնական,
Մրրկավարս աղջիկներիդ անկասելի եռանդը ժիր,
Խաղաղատենչ մարտիկներիդ հայրենապահ ուժն հաղթական,
Ու լուսամիտ հերոսներիդ քանքարախույզ հանճարն անծիր:

Ու տենչում եմ միախառնել երանց ջանքին արգասավանդ,
Ո՛չ լաց ու կոծ, ո՛չ վիշտ ու ցավ, այլ տնադարձ երգ ու եռանդ.
Կարոտավառ հոգիս պարզած լայնածածան դրոշի նման,
Զգտում եմ քե՛զ, քե՛զ հետ ձուլվում, ի՛մ Հայրենիք, ի՛մ անման:

Պլովդիվ

Մ. ԷՍԿԻՃՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Քու կոչին, երկի՜ր, ունկնդիր եմ ես,
Թող անհագ լսեմ, լսեմ հրեվագին
Հնչյուններն անուշ ուրախ քու ձայնին
Եվ կարկաչումը լեզվիդ այդ վեհ:

Սուրբ, վերածընած, անուրջն երկիր,
Բուժե՛ իմ սրտի խոցերը այս խոր,
Անմար արևիդ շողով լուսավոր
Ողողե՛ հոգիս հեզ ու վշտակիր:

Կը տենչամ անցնին օրերն իմ դժնի,
Եվ քու առօրյան տեսնեմ ես հավետ.
Կը տենչամ մոռնալ կյանքս դառնաղետ՝
Ընկած կարոտին գիրկդ մայրենի:

Հավերժո՜ղ երկիր, ո՜հ, արևե՛ ինձ,
Ավետե՛ դու ցող, ավետե՛ գարուն
Թառամած, գունատ իմ ծաղիկներուն
Եվ հանգստություն հոգվույս այս անբիծ:

Քու կոչին, երկի՜ր, ունկնդիր եմ ես,
Թող անհագ լսեմ, լսեմ հրեվագին
Հնչյուններն անուշ զրվարթ քու կանչին
Ու վերադառնամ ես կարոտակեզ...